# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՁԵՎԱԹՂԹԵՐԻ, ԹՂԹԱՊԱՆԱԿՆԵՐԻ, ԿԱՇՎԵՊԱՆԱԿՆԵՐԻ ԵՎ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԲԱՑԻԿՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

№ ՍՊ-ԲԸԱՀ 90-2017

ք. Երևան «21» փետրվարի 2017 թ.

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Վահե Էլոյանի, որը գործում է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Գնորդ, մի կողմից, և «ԱԿՏԻՍ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Հակոբյանի, այսուհետ՝ Վաճառող, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող» մյուս կողմից, միասին անվանվելով նաև Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված № 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի № 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ձևաթղթերը, թղթապանակները, կաշվեպանակները և շնորհավորական բացիկները /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված № 3/՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում:

## 2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին և/կամ Ստացողին Պայմանագրի № 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին և/կամ Ստացողին՝ նրա կողմից նշված հասցեով /ներով/:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 **Գնորդն իրավունք ունի՝**

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են հինգ օրից ավելի.

3.1.2 եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ)հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից,

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը,

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով,

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են հինգ օրից ավելի,

3.1.8 զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 **Գնորդը պարտավոր է՝**

3.2.1 կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը.

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից.

3.2.5 պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 **Վաճառողն իրավունք ունի՝**

3.3.1 Գնորդից և/կամ Ստացողից պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով.

3.3.3 Գնորդից և/կամ Ստացողից պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է սույն Պայամագրի պայմանները,

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները.

3.3.5 Գնորդի և/կամ Ստացողի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 **Վաճառողը պարտավոր է՝**

3.4.1 Գնորդին և/կամ Ստացողին հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում.

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին և/կամ Ստացողին մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում.

3.4.3 ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 կետի բ/ ենթակետի և 3.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում.

3.4.4 Գնորդին և/կամ Ստացողին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք.

3.4.5 Գնորդին և/կամ Ստացողին հանձնել Պայմանագրի № 1 և № 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի և/կամ Ստացողի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր.

3.4.6 թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը.

3.4.7 հետ տանել Գնորդի և/կամ Ստացողի կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը.

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը.

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը.

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները.

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ 991000 (ինը հարյուր իննսունմեկ հազար) ՀՀ դրամ.

4.1.1 Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը,

4.1.2 Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը.

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված № 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2017 թվականի դեկտեմբերի 25-ը:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին և/կամ Ստացողին՝ Պայմանագրի № 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում,

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը.

6.2.1 մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված № 4) և Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված № 4.1),

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ,

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հնգօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը.

6.5 եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար.

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով.

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ,

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով.

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով.

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով.

7.7 տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

## 8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով.

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը.

9.2.1 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության.

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում.

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը.

9.4.1 արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման,

9.4.2 Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով.

9.6 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են.

9.7 Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը.

9.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը.

9.9 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով.

9.9.1 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Վաճառողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

9.10 Պայմանագիրը կազմված է 13 (տասներեք) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի № 1, № 2, № 3, № 4 և № 4.1 հավելվածները, համարվում են սույն պայմանագրի անբաժանելի մասը.

9.11 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն<br>ք. Երևան, Աբովյան 9<br>ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011059251<br>Հ/Հ 900011059186<br>ՀՎՀՀ-02586282 | «ԱԿՏԻՍ» ՍՊԸ<br>ք. Երևան, Արզումանյան 4/27,<br>հեռ.՝ 39-19-95<br>«Անելիքբանկ» ՓԲԸ<br>հ/հ 11800123758500<br>ՀՎՀՀ 01240876 |
| Աշխատակազմի ղեկավար՝<br>Վ.Գրիգորյան<br>(ստորագրություն)<br>Կ. Տ. | Տնօրեն՝<br>Գ.Հակոբյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. |

Հավելված № 1
«21» փետրվարի 2017թ. կնքված
№ ՍՊ-ԲԸԱՀ 90-2017 գնման պայմանագրի

## ՁԵՎԱԹՂԹԵՐԻ, ԹՂԹԱՊԱՆԱԿՆԵՐԻ, ԿԱՇՎԵՊԱՆԱԿՆԵՐԻ, ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԲԱՑԻԿՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| № | ԱՆՎԱ ՆՈՒՄԸ | ՉԱՓՄԱՆ ՄԻԱՎՈՐԸ | ՔԱՆԱԿԸ | ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ |
|---|---|---|---|---|
| | | | | |
| 1. | Ձևաթղթեր | հատ | 2000 | **Նախարարի ձևաթուղթ՝ 1000 հատ**<br>Թուղթ օֆսեթ՝ 90 գ/մ2 / Fedrigone/,<br>սպիտակությունը՝ 98 %,<br>չափսը՝ 210 x 297 մմ, տպագրությունը՝ 4 + 0: Ձևաթղթի վերևի ձախ մասում՝ ՀՀ զինանշանի ոսկեփայլ, եռաչափ դաջվածք:<br>Ոսկեգույն զինանշանի կողքին մեծ չափսի տառերով և թավ տառատեսակով (bold) գրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ», երկրորդ տողում՝ «ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ», երրորդ տողի կենտրոնում՝ «ՆԱԽԱՐԱՐ» բառերը: Ներքևի տողի կենտրոնում ավելի փոքր տառատեսակով՝ «MINISTER», հաջորդ տողում՝ «OF SPORT AND YOUTH AFFAIRS OF THE REPUBLIC OF ARMENIA»: Հաջորդ տողի կենտրոնում գրված է «МИНИСТР», ներքևում՝ «СПОРТА И ПО ДЕЛАМ МОЛОДЁЖИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ»: Զինանշանի ներքևի մասում՝ 5 մմ հեռավորության վրա 200 մմ երկարությամբ ոսկեփայլ հորիզոնական •ծի դաջվածք, որին հաջորդող տողի ձախ անկյունում՝ «___» _____ 201 թ. № _____ նախատեսված ամսաթվի, ամսի և տարեթվի, ինչպես նաև գրության հաշվառման համար: Նույն ուղղությամբ աջ անկյունում՝ «ՀՀ, Երևան-0001, Աբովյան 9», հաջորդ տողում՝ «9 Abovyan St., 0001 Yerevan, RA», հաջորդ տողում՝ «Ул. Абовяна 9, 0001 Ереван, РА» բառերը: Նույն ուղղությամբ հաջորդաբար երեք տողերի վրա՝ «T/f : (+37411) 526-529, e-mail: msy@msy.am, website: www.msy.am» բառերը:<br>Ձևաթղթի կենտրոնական մասում՝ գունավոր, ստվերային տեսքով, նախարարության տարբերանշանը:<br>Ձևաթղթի նմուշները տրամադրվում են թղթային և էլեկտրոնային ձևով: Պահանջվող ձևաթուղթը կատարողի կողմից ձևավորվելուց և տպվելուց հետո համաձայնեցնել պատվիրատուի (ստացողի) հետ: |
| | | | | **Նախարարի տեղակալի ձևաթուղթ՝ 400 հատ**<br>Թուղթ օֆսեթ՝ 90 գ/մ2 / Fedrigone/,<br>սպիտակությունը՝ 98%,<br>չափսը՝ 210 x 297 մմ, տպագրությունը՝ 4+0:<br>Ձևաթղթի վերևի ձախ մասում՝ ՀՀ զինանշանի ոսկեփայլ, եռաչափ դաջվածք:<br>Ոսկեգույն զինանշանի կողքին մեծ չափսի տառերով և թավ տառատեսակով (bold) գրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ», երկրորդ տողում՝ «ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ», երրորդ տողի կենտրոնում՝ «ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ» բառերը: Ներքևի տողի կենտրոնում ավելի փոքր տառատեսակով՝ «DEPUTY MINISTER», հաջորդ տողում՝ «OF SPORT AND YOUTH AFFAIRS OF THE REPUBLIC OF ARMENIA»:<br>Հաջորդ տողի կենտրոնում գրված է «ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА», ներքևում՝ «СПОРТА И ПО ДЕЛАМ МОЛОДЁЖИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ»: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | Զինանշանի ներքևի մասում՝ 5 մմ հեռավորության վրա 200 մմ երկարությամբ ոսկեփայլ հորիզոնական •ծի դաջվածք, որին հաջողդող տողի ձախ անկյունում՝ «___» _____ 201 թ. № _____ նախատեսված ամսաթվի, ամսի և տարեթվի, ինչպես նաև գրության հաշվառման համար: Նույն ուղղությամբ աջ անկյունում՝ «ՀՀ, Երևան-0001, Աբովյան 9», հաջորդ տողում՝ «9 Abovyan St., 0001 Yerevan, RA», հաջորդ տողում՝ «Ул. Абовяна 9, 0001 Ереван, РА» բառերը: Նույն ուղղությամբ հաջորդաբար երեք տողերի վրա՝ «T/f : (+37411) 526-529, e-mail: msy@msy.am, website: www.msy.am» բառերը:<br>Ձևաթղթի կենտրոնական մասում՝ գունավոր, ստվերային տեսքով նախարարության տարբերանշանը:<br>Ձևաթղթի նմուշները տրամադրվում են թղթային և էլեկտրոնային ձևով: Պահանջվող ձևաթուղթը կատարողի կողմից ձևավորվելուց և տպվելուց հետո համաձայնեցնել պատվիրատուի (ստացողի) հետ: |
| | | | | **Աշխատակազմի ղեկավարի ձևաթուղթ՝ 600 հատ**<br>Թուղթ օֆսեթ՝ 90 գ/մ2 / Fedrigone/, սպիտակությունը՝ 98 %, չափը՝ 210 x 297 մմ, տպագրությունը՝ 4 + 0: Ձևաթղթի վերևի ձախ մասում՝ ՀՀ զինանշանի ոսկեփայլ, եռաչափ դաջվածք: Ոսկեգույն զինանշանի կողքին մեծ չափսի տառերով և թավ տառատեսակով (bold) գրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ» երկրորդ տողում՝ «ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ», երրորդ տողի կենտրոնում՝ «ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ» բառերը: Ներքևի տողի կենտրոնում ավելի փոքր տառատեսակով՝ «HEAD OF STAFF», հաջորդ տողում՝ «MINISTRY OF SPORT AND YOUTH AFFAIRS OF THE REPUBLIC OF ARMENIA»: Հաջորդ տողի կենտրոնում գրված է «РУКОВОДИТЕЛЬ АППАРАТА», ներքևում՝ «МИНИСТЕРСТВА СПОРТА И ПО ДЕЛАМ МОЛОДЁЖИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ»:<br>Զինանշանի ներքևի մասում՝ 5 մմ հեռավորության վրա 200 մմ երկարությամբ ոսկեփայլ հորիզոնական գծի դաջվածք, որին հաջողդող տողի ձախ անկյունում՝ «___» _____ 201 թ. № _____ նախատեսված ամսաթվի, ամսի և տարեթվի, ինչպես նաև գրության հաշվառման համար: Նույն ուղղությամբ աջ անկյունում՝ «ՀՀ, Երևան-0001, Աբովյան 9», հաջորդ տողում՝ «9 Abovyan St., 0001 Yerevan, RA», հաջորդ տողում՝ «Ул. Абовяна 9, 0001 Ереван, РА» բառերը: Նույն ուղղությամբ հաջորդաբար երեք տողերի վրա՝ «T/f : (+37411) 526-529, e-mail: msy@msy.am, website: www.msy.am» բառերը:<br>Ձևաթղթի կենտրոնական մասում՝ գունավոր, ստվերային տեսքով նախարարության տարբերանշանը:<br>Ձևաթղթի նմուշները տրամադրվում են թղթային և էլեկտրոնային ձևով: Պահանջվող ձևաթուղթը կատարողի կողմից ձևավորվելուց և տպվելուց հետո համաձայնեցնել պատվիրատուի (ստացողի) հետ: |
| 2. | Թղթապանակներ (գրպանիկով և նախարարության տարբերանշանով) | հատ | 400 | Չափը՝ 450 x 310 մմ /բաց վիճակում/, թուղթը՝ 330 գ/մ2 դեկորատիվ /Plike/: Բացվածքի աջ և ձախ կողմերի ներքևի անկյունամասում ամրացված են գրպանիկներ կոր եզրագծով՝ չափը՝ 150 x 210 x 5 մմ: Թղթապանակի երեսամասում՝ նախարարության տարբերանշանը ոսկեգույն տպագրությամբ, 7 սմ շառավիղով: Տարբերանշանի ներքևի մասում ոսկեգույնով տպված է՝<br>**Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն**<br>(250 հատ) |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | Չափսը՝ 450 x 310 մմ (բաց վիճակում), թուղթը՝ 330 գ/մ2 դեկորատիվ /Plike /: Բացվածքի աջ և ձախ կողմերի ներքևի անկյունամասում ամրացված են գրպանիկներ կոր եզրագծով՝ չափը՝ 150 x 210 x 5 մմ: Թղթապանակի երեսամասում նախարարության տարբերանշանը ոսկեգույն տպագրությամբ, 7 սմ շառավիղով: Տարբերանշանի ներքևի մասում ոսկեգույնով տպված է՝ **Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարար** (150 հատ) |
| 3. | Կաշվեպանակ | հատ | 5 | Չափսը՝ 225 x310 մմ /փակ վիճակում/: Կաշվեկազմ: Ստվարաթուղթ՝ 1200գ/մ$^2$ և 1000գ/մ$^2$: Սպունգ՝ 0,5սմ: Անկյունները կորացրած:Բացվածքի աջ և ձախ կողմերը պաստառված են թավշյա կտորով: Աջ մասում՝ ամրացված է թափանցիկ ժապավեն 0,7 սմ լայնությամբ: Թղթապանակի երեսամասում նախարարության տարբերանշանը 7 սմ շառավիղով: Տարբերանշանի ներքևի մասում ոսկեգույնով դաջված է՝ **Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարար** (5 հատ) |
| 4. | Շնորհավորական բացիկ (ալ կարմիր գույնի | հատ | 650 | Չափսը՝ 200 x 100 մմ, մեկ ծալք, թուղթը՝ դեկորատիվ, թավշյա ծածկույթով, ալ կարմիր գույնի «Պլայկ», տպագրությունը՝ բացիկի երեսամասում թափանցիկ լաքապատ ծածկույթ 0,15 միկրոն բարձրությամբ, նախարարության տարբերանշանը և «ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն» սպիտակ գույնով տեքստը: Բացիկի նմուշների տրամադրումը՝ թղթային ձևով: Պահանջվող բացիկը Կապալառուի կողմից ձևավորվելուց և տպվելուց հետո համաձայնեցնել պատվիրատուի (ստացողի) հետ: |

**ԳՆՈՐԴ**

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
ք. Երևան, Աբովյան 9
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011059251
Հ/Հ 900011059186
ՀՎՀՀ-02586282

Աշխատակազմի ղեկավար՝

_____ Լ. Եղոյան

(ստորագրություն)

Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

«ԱԿՏԻՍ» ՍՊԸ
ք. Երևան, Արզումանյան 4/27,
հեռ.՝ 39-19-95
«Անելիքբանկ» ՓԲԸ
հ/հ 11800123758500
ՀՎՀՀ- 01240876

Տնօրեն՝

_____ Գ.Հակոբյան

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված 2
2017 փետրվարի «21»-ին կնքված
N ՍՊ-ԲԸԱՀ-90-2017 գնման պայմանագրի

**ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

Անող. Հազ.ՀՀ դրամ

| N | Ձեռք բերվող ապրանքների, աշխատանքի, ծառայության անվանումը | Ընդամենը | Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2017 թ. պետական բյուջեի միջոցների հաշվին, ընդ որում | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 1-ին եռամսյակ | | | 2-րդ եռամսյակ | | | 3-րդ եռամսյակ | | | 4-րդ եռամսյակ | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր |
| | 1 | 3 = (4:15) | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 |
| 1 | բլանկներ | 200,00 | | 20,0 | 20,0 | 70,0 | 70,0 | 70,0 | 120,0 | 120,0 | 120,0 | 200,0 | 200,0 | 200,0 |
| | Թղթապանակներ | 300,00 | | 30,0 | 30,0 | 105,0 | 105,0 | 105,0 | 180,0 | 180,0 | 180,0 | 300,0 | 300,0 | 300,0 |
| | Կաշվեպանակ | 36,00 | | 10,0 | 10,0 | 10,0 | 36,0 | 36,0 | 36,0 | 36,0 | 36,0 | 36,0 | 36,0 | 36,0 |
| 2 | Շնորհավորական բացիկներ | 455,00 | | 45,5 | 45,5 | 159,3 | 159,3 | 159,3 | 273,0 | 273,0 | 273,0 | 455,0 | 455,0 | 455,0 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | **991,00** | | 105,5 | 105,5 | 344,3 | 370,3 | 370,3 | 609,0 | 609,0 | 609,0 | 991,0 | 991,0 | 991,0 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն

ք. Երևան, Աբովյան 9
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչություն

Հ/Հ 900011055426
Հ/Հ 900011059186
ՀՎՀՀ 02586282

Աշխատակազմի ղեկավար [illegible]յան

(ստորագրություն)
Կ. Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«ԱԿՏԻՍ» ՍՊԸ
ք. Երևան, Արզումանյան 4/27

Հեռ. 39-19-95

«Անելիքբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 118001237585000
ՀՎՀՀ՝ 01240876

Տնօրեն՝ Գ. Հակոբյան

(ստորագրություն)
Կ. Տ.

Հավելված 2
2017 թ. 02 «21» -ին կնքված
N [illegible]-90-2017 գնման պայմանագրի

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Ձեռք բերվող ապրանքների, աշխատանքի, ծառայության անվանումը | | | | 1-ին եռամսյակ | | 2-րդ եռամսյակ | | 3-րդ եռամսյակ | | 4-րդ եռամսյակ | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| N | Անվանումը | Չափման միավորը | Միավորի գինը (դրամ) | Քանակը | Գինը (ՀՀ. դրամ) | Քանակը | Գինը (ՀՀ դրամ) | Քանակը | Գինը (ՀՀ դրամ) | Քանակը | Գինը (ՀՀ դրամ) | Քանակը | Գինը (ՀՀ դրամ) |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| 1 | Բլանկներ | հատ | 100 | 2000 | 200000 | 0 | 0,0 | 0 | 0,0 | 0 | 0,0 | 2000 | 200000 |
| 2 | Թղթապանակներ | հատ | 750 | 400 | 300000 | 0 | 0,0 | 0 | 0,0 | | 0,0 | 400 | 300000 |
| 2 | Կաշվեպանակ | հատ | 7200 | 5 | 36000 | 0 | 0,0 | 0 | 0,0 | 0 | 0,0 | 5 | 36000 |
| 3 | Շնորհավորական բացիկներ | հատ | 650 | 700 | 455000 | 0 | 0,0 | 0 | 0,0 | 0 | 0,0 | 700 | 455000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | | | 991000 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 3105 | 991000 |

## ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
ք. Երևան, Աբովյան 9

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչություն

Հ/Հ 900011059251
Հ/Հ 900011059186
ՀՎՀՀ - 02586282
Աշխատակազմի ղեկավար

Վ. Էլոյան

(ստորագրություն)
Կ. Տ.

## ԿԱՏԱՐՈՂ

«ԱԿՏԻՍ» ՍՊԸ
ք. Երևան, Արգումանյան 4/27

Հեռ. 53-42-33
«Անելիքբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 11800123758500
ՀՎՀՀ՝ 01240876

Տնօրեն՝

Գ. Հակոբյան

(ստորագրություն)
Կ. Տ.

Հավելված 4
«----» փետրվարի 2017թ. կնքված
№ ՍՊ-ԲԸԱՀ ---------- *գնման պայմանագրի*

**Պատվիրատու**
Հայաստանի Հանրապետության սպորտի և
երիտասարդության հարցերի նախարարություն
ք. Երևան, Աբովյան 9
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011059251
Հ/Հ 900011059186
ՀՎՀՀ-02586282

**Պայմանագրի կողմ**
«ԱԿՏԻՍ» ՍՊԸ
ք. Երևան, Արզումանյան 4/27,
հեռ.՝ 39-19-95
«Անելիքբանկ» ՍՊԸ
հ/հ 11800123758500
ՀՎՀՀ- 01240876

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս
_____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի № եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| № | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն անուն՝

Կ.Տ.

Հավելված 4.1
«-------» փետրվարի 2017թ. կնքված
№ ՍՊ-ԲԸԱՀ---------- *գնման պայմանագրի*

# ԱԿՏ №

**պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ**

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Գնորդ) և
(Գնորդի անունը)
----------ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ------- -ին կնքված № ---------
(Վաճառողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| **Անվանումը** | **Քանակական ցուցանիշը (փաստացի)** | **Չափի միավորը** |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____ռագրություն